

ք. Երևան

15.12.2021թ.


Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին» թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի պահանջների՝ հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2001թ. օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի» անդամների՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի 33/14.3/27521-2021, ՀՀ շրջակա միջավայրի 4/02.6/13998-2021, ՀՀ էկոնոմիկայի 03/17641-2021 նախարարությունների, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության էներգետիկայի վարչության, Քաղաքաշինության կոմիտեի 06/11.1/11016-2021 և Կադաստրի կոմիտեի ԱԳ/11723-2021 գրություններով ներկայացրած դրական կարծիքները՝ Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ **ՀՀ Վայոց ձորի մարզի Մալիշկա համայնքի** հողերի նպատակային նշանակությունը փոխելու նպատակով կազմված հողաշինարարական գործին, որով նախատեսվում է Մալիշկա համայնքի վարչական սահմաններում գտնվող քաղաքացու սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,15 հաայլ հողատեսքից 0,01 հա (կադաստրային ծածկագիր՝ 10-032-0221-0657) հողամասը փոխադրել էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակության կապի հողեր գործառնական նշանակության:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ. Տերտերյան

քարտուղար՝



Մ. Մկրտչյան